

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԹՈՒՐ ՌԵՄԲՈՅԻ «ՄԻ ԵՂԱՆԱԿ ԴԺՈՒՔՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

19-րդ դ. նշանավոր բանաստեղծ Արթուր Ռեմբոն ֆրանսիական ժամանակակից բանաստեղծության հիմնադիրներից մեկն է։ Նրա բանաստեղծությունները առաջին անգամ առանձին գրքով հայերեն թարգմանվեցին 1991 թ. (թարգմ. Ա. Հակոբյան, Գ. Գասպարյան, Հ. Բախչինյան, Ա. Ալեքսանյան)։

Հոգվածում մենք քննության ենք առնելու Ռեմբոյի «Մի եղանակ դժոխքում» ժողովածուի (թարգմ. Աննա Հակոբյան) հայերեն թարգմանության մեջ գործածված հնարները։ «Թարգմանչական հնարները կոնկրետ գործողություններ կամ որոշակի միջոցներ են, որոնց շնորհիվ հաղթահարվում են թարգմանության ընթացքում ծագող դժվարությունները»²։

Այդ հնարները բազմազան են։ Ստորև առանձին խմբերով կանդրադառնանք դրանցից մի քանիսին։

ա) Հարմարեցում։ Սա այն հնարն է, երբ թարգմանող լեզուն կրողի համար որևէ անհայտ կամ քիչ հայտնի, անսովոր միավոր փոխարինում է առավել հայտնի, սովորական միավորով։ Այն իրագործվում է բացառապես բառային միջոցներով։

Եթե ֆրանսերենի *quand les poules auront des dents* (երբ հավերն ատամներ ունենան) արտահայտությունը թարգմանենք բառացի, ապա հայ ընթերցողի համար այն խորթ կինչի, ուստի օգտվելով *հարմարեցում* հնարից՝ փորձում ենք գտնել վերոհիշյալ արտահայտության համապատասխանը հայերենում՝ առաջնությունը տալով ոչ թե ձևին, այլ բովանդակությանը։ Օրինակ՝ *էչի գատկին*։

Couac բառի հայերեն թարգմանությունը նշանակում է «աղավաղված, կեղծ, կոպիտ ու տհաճ ծայն»։ Սակայն նմանատիպ թարգմանության արդյունքում մի կողմից կորչում է ստեղծագործության բանաստեղծական շունչը, մյուս կողմից էլ հայ ընթերցողին հարազատ չէ։ Սիա թե ինչու թարգմանիչը ընտրել է «կոինչ» տարբերակը, որը նշանակում է «ճիկ (ճիչ), փոքր ծայն», իսկ գավառական նշանակությամբ՝ «ազռավի ծայն»³։ Նշենք, որ լեզվի զարգացման արդի փուլում վերոհիշյալ բառը գործածվում է վերջին նշանակությամբ, ինչպես նաև հավելված է «տհաճ, կոպիտ ծայն» իմաստը⁴։ Այս վերջինից էլ օգտվել է թարգմանիչը՝ նկատի ունենալով ազռավի ծայնի նմանեցումը տհաճ ու կոպիտ ծայնին։ Օրինակ՝

Or, tout dernièrement m'étant trouvé sur le point de faire le dernier couac (205) – Սակայն վերջերս, երբ պարզեցի, որ շատ շուտով իմ վերջին «կոինչը» պիտի արձակեմ (84)։

J'avais de plus en plus faim de sa bonté (219) – Ես ավելի ու ավելի էի պապական մրա բարությանը (96) և այլն։

Օրինակում *avoir faim* (քաղցած լինել, այստեղ գործածված է փոխաբերա-

կան իմաստով կարիքն ունենալ, խիստ ցանկանալ) քարգմանված է պապականել, քանզի վերոհիշյալ փոխաբերական իմաստով (կարիքն ունենալ, խիստ ցանկանալ) և այն էլ զեղարվեստական ոճում հայերենում գործածվում է հենց վերջինը: Եվ ընդհանրապես հայ բանաստեղծական խոսքում շատ են հանդիպում պապակ, պապականել և այս բառախմբի շատ բառեր: Օրինակ

Հարություն տվող շունչն է զգացվում

Պոլսո թաղերում հայրենապապակ*:

Եվ... պիտի կյանքում անհագ մի պապակ

Հա՛ նրան դրդեր

Օտար թաթիկից շոյանք մուրալու,

Թմբիկ թուշիկից հայցելու մի պագ*:

Սեկ այլ օրինակում *tout mon fardeau est déposé* (ողջ բեռս ցած է դրված) քարգմանված է *թոթափել* եմ *ամբողջ բեռս*. փոխվել է նախադասության ենթական, կրավորական սեռը փոխարինվել է ներգործական սեռով, որը շատ ավելի գրագետ է, հայեցի և հասու հայ ընթերցողին և բանաստեղծական ոգուն:

Tout mon fardeau est déposé (212) – *Թոթափել եմ ամբողջ բեռս* (90):

Այս ենթավերնագրի տակ ներկայացված են նաև քիչ թե շատ կայուն արտահայտություններ, որոնց քարգմանությունը ենթադրում է համապատասխան առավել հայեցի տարբերակներով փոխարինում: Այսպես ֆրանսերենում ասում են *avoir une bonne (լավ) part*, սակայն հայերենում քարգմանվում է *մեծ բաժին ունենալ (և ոչ թե լավ բաժին ունենալ)*:

La vieillesse poétique avait une bonne part dans mon alchimie du verbe (224) – *Հնամենի քերթվածքն իր մեծ բաժինն ուներ իմ ալքիմիայի մեջ* (99):

Նույն ձևով *perdre la sagesse* (խոհեմությունը, ողջամտությունը կորցնել) քարգմանված է *խելքը թռցնել*, ինչն ավելի «ծանոթ է և սովորական» հայ ընթերցողին:

Mais moi qui ai perdu la sagesse (218) – *Բայց ես, որ թռցրել եմ խելքս* (94):

La main à plume vaut la main à charrue. (Գրիչ բռնած ձեռքը արժե գութան բռնած ձեռք:) (207) – *Գրիչ ես բռնում թե բրիչ, նույն արժեքն ունի* (85):

Օրինակում **գութան** բառը քարգմանված է *բրիչ*: Այսպես նախադասության մեջ կողք կողքի գործածված են *գրիչ* և *բրիչ* բառերը, որոնք լայն իմաստով հարանուներ են (նմանահունչ տարարմատ բառեր առհասարակ): Նմանատիպ գործածությունն ավելի ընդունված է հայ բանաստեղծական տողերում, քանզի բացի այն, որ հանդես են գալիս որպես հանգաբառեր, հարանունների գործածությունն ավելի սահունություն, բարեհնչունություն է հաղորդում խոսքին, այն դարձնում ավելի դիպուկ և արտահայտիչ. *tenir le pas gagné* (պահել շահած քայլը) (237) – *պահպանել ձեռք բերածը* (109):

բ) Փոխհատուցում: Փոխհատուցումը քարգմանական այն հնարն է, որը հնարավորություն է ընձեռում լեզվական միջոցներով լրացնել քարգմանության ընթացքում կատարված թե իմաստային և թե ոճական կորուստները: Ի դեպ, այս հնարը կարող է իրագործվել բառային, ոճական, քերականական և այլ միջոցներով:

Այսպես *Je le vois, lui*. նախադասության մեջ ոճական հատույթավորման (segmentation) միջոցով կոնկրետ դեպքում շեշտադրվում է նախադասության

ուղիղ խնդիրը: Այս օրինակն առանց կորստի և ոճական տարրերը պահպանված թարգմանելու համար անհրաժեշտ է դիմել փոխհատուցում հնարին՝ փորձելով կորուստը կոնկրետ դեպքում լրացնել խոսքի արտահայտչականությամբ՝ շեշտադրմամբ կամ էլ շարադասության փոփոխությամբ: Այսինքն *ես նրան եմ տեսնում*: // *Նրան եմ ես տեսնում*:

Նմանատիպ օրինակների հանդիպում ենք նաև Ռեմբոյի մեր թարգմանության մեջ: Նշենք, որ գերակշիռ մասն են կազմում միակազմ նախադասությունները երկկազմով թարգմանելու դեպքերը:

Եթե ֆրանսերենին շատ ավելի են բնորոշ միակազմ նախադասությունները, ապա նույնը չի կարելի ասել հայերենի մասին:

Խոսելով անվանական նախադասությունների մասին Ա. Մեյեն նշում է, որ հայերենում եմ բայն ավելի կարևոր է, քան լատիներենում (ինչպես նաև ֆրանսերենում), քանի որ ստորոգելիական վերադիր ածականը շատ հաճախ անփոփոխ է, և այդ դեպքում միայն *եմ* բայն է նշում թիվը⁷:

Օրինակ *Belles. Charmantes.* անվանական միակազմ նախադասությունների *Գեղեցիկ: Հմայիչ* թարգմանությունը չի արտահայտում հոգնակի թիվը (էլ չենք խոսում իզական սեռի մասին): Տվյալ դեպքում անհրաժեշտ է վերականգնել հանգույցը *Գեղեցիկ են: Հմայիչ են*: // *Գեղեցիկ են: Հմայիչ*:

Մեյեն օրինակ է բերում Ավետարանի թարգմանությունը, որտեղ թարգմանիչը, *հակառակ բառացի փոխադրելու իր ձգտմանը*, կանոնավորապես հանգույցներ է ավելացրել այնտեղ, որտեղ հունարեն բնագրում դրանք պակասում են:

Դուկ., Ժ, 2, Դունձք բազում են եւ մշակք սակաւ⁸:

Այսպես մինչ ֆրանսերենում միակազմ նախադասություններն առանձին գործածվում են թե բանավոր և թե՝ գրավոր խոսքում, ինչպես նաև զանազան ոճերում, ապա նույնը չի կարելի ասել հայերենի մասին: Ուսումնասիրված օրինակների վիճակագրությունը նույնպես վկայում է ֆրանսերենում միակազմ նախադասությունների առատությունը հայերենի համեմատությամբ: Ստորև ներկայացված են օրինակներ, որտեղ թագմանիչը միակազմ նախադասությունները փոխհատուցել է երկկազմով, ինչն ավելի ընդունելի է տվյալ համատեքստերում: Օրինակ

Maitres et ouvriers, tous paysans, ignobles (207). – Տեր թե մշակ, կամ գյուղացի, բոլորն էլ նողկալի են (85):

Le sort du fils de famille, cercueil prématuré couvert de limpides larmes (211). – Տան տղոն բախտն է անժամանակ դազաղ ծածկված զուլալ արցունքներով (89):

L'automne déjà (236). – Աշուն է արդեն (108):

La vie dure, l'abrutissement simple (209). – Կյանքը դաժան է, տխմարանալը հեշտ (87):

Վերջին օրինակը բարդ համադասական նախադասությամբ է թարգմանված հայերենում՝ երկու դեպքում էլ վերականգնելով երկկազմի կաղապարը: Սակայն ֆրանսերեն բնագրի թերադեքության զգացումը թարգմանիչը փոխհատուցել է երկրորդ նախադասության հանգույցի գեղյմամբ:

Հաջորդ երեք օրինակներում ոչ միայն վերականգնված է նախադասության ստորոգյալը, այլև նախադասությունները որոշակի նկարագրությամբ⁹ են թարգմանված. հավելված են նախադասության իմաստը լրացնող այլ անդամներ:

Plus aucun son (216). – Այլևս ոչ մի հնչյուն չեմ զգում (92):

Mais, cher Satan, je vous en conjure, une prunelle moins irritée (206)! – Բայց, սիրելի Սատանա, աղաչում եմ քեզ, արյունով մի լցոնեք ձեր աչքերը (84):

Pas même un compagnon (210). – Ստերիմ անգամ չունեի (88):

Հաջորդ օրինակը բացականչական նախադասություն է: Ֆրանսերենում այն արտահայտված է համապատասխան նշանով և նախադասության միակազմությամբ: Կորուստը փոխհատուցելու համար թարգմանիչը ներմուծել է *ինչպիսի* բացականչական բառը: Եվ չնայած բացակայում է անհրաժեշտ նշանը, սակայն բառային միջոցներով արդեն արտահայտվում է բացականչական նրբերանգը:

Drôle de ménage (221)! – Ինչպիսի արտառոց զույգ (97):

Թարգմանության ժամանակ դժվարություններ են ծագում հատկապես, երբ գործող անձանց անունների փոխարեն գործածվում են սեռանիշ անձնական դերանունները: Այսպես՝ Կ. Դեդեյանի «Մերկ, նստակյաց տղամարդը» ստեղծագործության հերոսները երկուսն են՝ կինը և տղամարդը: Հեղինակը ողջ ընթացքում գործածել է ֆրանսերենի սեռանիշ դերանունները (*il, elle*), որոնք երկու դեպքում էլ թարգմանվում են *նա*: Տվյալ դեպքում թարգմանիչը ստիպված կորուստը պետք է լրացնի բառային միջոցներով: Ասենք՝ կին և տղամարդ:

Մեր դիտարկած ժողովածուի թարգմանիչը հենց այդպես էլ արել է.

Elles ne peuvent plus que vouloir une position assurée (218). – Կանայք տենչում են միայն ապահով դիրք (94):

Elle est morte (221). – Այդ կինը մեռավ (97):

Ֆրանսերենին հատուկ են նաև կրավորական կառույցի նախադասությունները: Հայերենին դրանք ավելի քիչ են բնորոշ, և դրանց առատությունը արդի ժամանակաշրջանում միանշանակ վկայում է այս կամ այն օտար լեզվի ազդեցության կնիքի մասին: Նմանօրինակ պատճենումների կարող ենք հանդիպել առավել հաճախ հեռուստատեսային եթերի ընթացքում կամ մամուլի էջերում, երբ հեռուստադիտողին կամ ընթերցողին մատուցվում է արտասահմանյան որևէ իրադարձության լուսաբանում (այսինքն՝ պատճենումը թարգմանությունից է բխում):

Հմուտ թարգմանիչը պարտավոր է զերծ մնալ նման ազդեցություններից և մատուցել հայեցի տարբերակ: Ներկայացնում ենք նման օրինակներ մեր դիտարկումներից.

J'avais été damné par l'arc-en-ciel (228). – Ինձ նզովել էր ծիածանը (103):

La charité nous est inconnue (230). – Գթասրտությանը անտեղյակ ենք մենք (105):

գ) Կոնկրետացում և ընդհանրացում: Այս երկուսը միմյանց հակադարձ հնարներ են: Առաջին դեպքում ընդհանուրը փոխարինվում է մասնավորով, սեռի հասկացությունը տեսակի հասկացությամբ, իսկ երկրորդ դեպքում հակառակ գործընթացն է տեղի ունենում: Օրինակ՝

ա) *parents* (ծնողներ) – հայր և մայր,

des calèches (սայլեր) – մանկասայլակներ,

pays (երկիր) – ծննդավայր,

des nouvelles chairs (նոր մաշկեր) – մաշկի նոր գույներ,

sur la grève (ափին) – ափի ավազներին,

un nid (բույն) – որջ,

fraîcheur (թարմություն) – թարմ օդ,

p) une prunelle (բիբ) – աչքեր,

regard (հայացք) – աչք,

les entrailles (աղիքներ) – որովայն:

դ) **Հականիշային թարգմանությունը** բնագրի որևէ միավորի թարգմանումն է դրա հակադիր միավորով, այն պայմանով, որ անփոփոխ մնա բնագրի բովանդակության պլանը: Օրինակ

Ah! La science ne va pas assez vite pour nous (232)! – Ա՛խ, գիտությունը բավական կամկար է մեզ համար (106):

Mon tact a disparu (216). – Շեմ շոշափում ոչինչ (93):

ե) **Նկարագրական թարգմանությունը** բնագրի որևէ միավորի ընդլայնված, մեկնողական թարգմանումն է:

Ծանուցման կարգով նշենք, որ հիշյալ հնարը Ա. Նազարյանի և Յ. Բաղդասարյանի գրքում¹⁰ ներկայացված է իբրև թարգմանության եղանակ, այն է թարգմանության տարատեսակ, որն աչքի է ընկնում թարգմանության լեզվում ելակետային տեքստի բովանդակության վերարտադրության որոշակի առանձնահատկություններով և միջոցներով: Դրան հակառակ մեր ներկայացրած հնարին երկու հոմանիշ հնարներ ենք գտնում վերոհիշյալ հեղինակների մոտ (բացատրություն և ընդլայնում):

զ) **Բացատրությունն** այն հնարն է, երբ թարգմանության տեքստ է ներմուծվում լրացուցիչ տեղեկատվություն թարգմանության լեզուն կրողի համար որևէ անհայտ միավոր պարզաբանելու համար: Այն կարող է կատարվել «ինչպես ավելի ծավալուն, նկարագրական թարգմանության, այնպես էլ ծանոթագրությունների միջոցով»: Այստեղից հետևում է, որ այն նույնանում է հենց մեր նշած հնարի հետ: Համաձայն չլինելով Նազարյանի հետ (մանավանդ նկատի ունենալով օրինակները *black paper*¹¹ – «սև գիրք», մի փաստաթուղթ է, որում քննադատվում է անգլիական կառավարության քաղաքականությունը և գործողությունները) մենք առանձնացնում ենք նկարագրություն և բացատրություն հնարները, քանզի առաջինը բնագրի ընդլայնված թարգմանությունն է, իսկ երկրորդը պարզաբանում է բնագիրը:

Այսպես Թումանյանի «Անուշ» պոեմի թարգմանիչը (Serge d'Herminy) բազմիցս օգտագործել է բացատրություն հնարը այս կամ այն միավորը պարզաբանելու համար: Ի դեպ, այն օգտագործվում է հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ազգային որևէ տարրի: Կոնկրետ պոեմում թարգմանիչն այն կատարել է տողատակի բացատրությամբ:

– Էն ո՞վ է, նանի, որ կանչում է մեզ:

«Qui é tait-ce donc, Nani?, qui nous appelait?»

¹¹*Nani signifie «mère» dans certains dialectes.* (Նանի նշանակում է «մայր» որոշ արբառներում):¹²

Ո՞ւր կորար, Անուշ, ա՛յ մազդդ կըտրած...

«Où t'es-tu perdue, Anouche? Ah! Cheveux coupés!...»

¹²*Terme d'imprécation populaire, d'origine païenne.* (Անեծքի ժողովրդական, հեթանոսական ծագմամբ արտահայտություն):¹³

Ձուռնաչին փղեց կոխի եղանակ:

Le joueur de zourna! sonna l'air de lutte.

¹³*Flûte arménienne.* (Հայկական ֆլեյտա):¹⁴

է) Ինչ վերաբերում է ընդլայնմանը, ապա այն «որևէ հաստատության, տեղի, հրատարակության և այլնի համառոտ անվան թարգմանությունն է նրանց լրիվ անվանմամբ»¹⁵: Օրինակ *Humanité* – *Յումանիտե քեթթ կան Արովյան* – *rue Abovian*:

Սա, իհարկե, պարզապես ընդարձակում է և սկզբունքորեն տարբերվում է նկարագրությունից:

Ամփոփելով վերջին երեք հնարները ընդգծենք, որ նկարագրությունը գործածվում է այն դեպքում, երբ առկա է թարգմանվող տվյալ միավորի հասկացությունը, բայց բացակայում է այն նշանակող բառը, բացատրության դեպքում բացակայում են թե՛ տվյալ միավորի հասկացությունը և թե՛ այն նշանակող բառը, իսկ ընդլայնման դեպքում առկա են և առաջինը, և՛ երկրորդը, իսկ հնարի գործածությունը կատարվում է միավորի իմաստի կոնկրետացման համար:

Մեր դիտարկած ժողովածուի մեջ չենք գտել ընդլայնման և բացատրության օրինակներ:

Ինչ վերաբերում է մեր առաջադրած նկարագրական թարգմանությանը, ապա առավել հաճախ այն կիրառվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է թարգմանել թարգմանվող լեզվում իր համազորը չունեցող որևէ միավոր: Օրինակ, երբ անհրաժեշտ է թարգմանել *maison, table, chaise* բառերը, ապա միանգամից կարելի է գտնել նրանց համապատասխան միավորները թարգմանության լեզվում՝ *տուն, սեղան, աթոռ*: Սակայն եթե անհրաժեշտ է թարգմանել *bal-ayeuse* բառը, որը չունի իր համապատասխան միավորը հայերենում, ապա պետք է տրվի նկարագրական թարգմանություն՝ *փողոցները ավելելու համար նախատեսված մեքենա*: Իհարկե այդ մեքենայի հասկացությունը հայ ընթերցողի մտահորիզոնում կա, այսինքն՝ պարզաբանման կարիք չկա, ուստի սա բացատրություն չէ, ոչ էլ ընդլայնում է, այն է՝ իմաստի կոնկրետացում չի կատարվել: Տվյալ դեպքում մեկ միավորը չունի իր համապատասխան միավորը, ուստի պետք է **նկարագրել**: Օրինակ

Mon caractère s'aigrissait (224). – *Բնավորությունս դառնում էր ավելի հստակ-բարոյ* (100):

S'il m'expliquait ses tristesses, les comprendrais-je plus que ses railleries (220)? – *Եթե նա ինձ բացատրեր իր անծկությունները, մի՞թե ես դրանք ավելի լավ կըմբռնեի, քան իր ծաղրալից կատակները* (97):

Chargé de mon vice (207) – *կրված մեղքի ծանրությունից* (87)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Արթուր Ռենբո, Բանաստեղծություններ, Ապոլոն, 1991:
- ² Ա. Նազարյան, Յ. Բաղդասարյան, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Եր., 2000, էջ 291:
- ³ Յր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 669:
- ⁴ Հայ-ռուսերեն բառարան, Եր., 1985, էջ 366:
- ⁵ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1973, էջ 159:
- ⁶ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1973, էջ 148:
- ⁷ Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 425:
- ⁸ Ա. Մեյե, նշվ. աշխ., Եր., 1978, էջ 426:

* Տե՛ս նկարագրական թարգմանություն:

¹⁰ Ա. Նազարյան, Հ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 244

¹¹ Ա. Նազարյան, Հ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 379:

¹² Hovh. Toumanian, Oeuvres choisies, M., 1987, էջ 52:

¹³ Hovh. Toumanian, Oeuvres choisies, M., 1987, էջ 54:

¹⁴ Hovh. Toumanian, Oeuvres choisies, M., 1987, էջ 61:

¹⁵ Ա. Նազարյան, Հ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 71

С. Григорян

ПРИЕМЫ ПЕРЕВОДА В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ СБОРНИКА «ОДНО ЛЕТО В АДУ» АРТУРА РЕМБО

Приемы перевода — это конкретные действия и операции, с помощью которых преодолеваются все трудности, которые возникают во время перевода. К наиболее известным переводческим приемам относятся адаптация, компенсация, конкретизация, генерализация, амплификация, экспликация, антонимический перевод, сокращение и т.д. В переводе произведения «Одно лето в аду» использованы следующие приемы: адаптация, компенсация, конкретизация, генерализация и т.д., с помощью которых текст более понятен армянскому читателю.

S. Grigoryan

TRANSLATION TECHNIQUES (TRANSLATION DEVICES) IN THE COMPOSITION "A SEASON IN HELL" OF ARTHUR RIMBAUD

Translation techniques are operations and actions that help to overcome all the difficulties existing during the translation. The most known techniques are adaptation, compensation, concretisation, generalization, amplification, compression and so on. The following techniques are used in the translation of the composition "A season in Hell": adaptation, compensation, coconcretisation, generalization, and so on. With the help of these techniques the text of the translation is more clear for the Armenian readers.